«Հ Ա Մ Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»	«Հ Ա Մ Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Բ	Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
«14» սեպտեմբեր 2000թ.	«14» 09 2000թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՀՀ զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հոգևոր ծառայությունն ստեղծվել է 1997 թվականի նոյեմբերի 13-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Ա-ի կողմից և ՀՀ պաշտպանության նախկին նախարար տիար Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ:

1.Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հոգևոր ծառայությունը (հետագայում՝ Հոգևոր ծառայություն) հիմնադրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գրով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով և մտնում ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մեջ:

1.2. Հոգևոր ծառայությունն առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոնադրությամբ,

3.2. Հոգևոր ծառայությունը ղեկավարվում է ՀՀ զինված ուժերի Հոգևոր ծառայության առաջնորդի կողմից, ՀՀ պաշտպանության նախարարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի ղեկավար հրահանգներով և հանձնարարականներով:

3.3. Հոգևոր ծառայության առաջնորդը նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնագրով և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

3.4. Բանակային կորպուսների և զորամասերի հոգևոր սպասավորները նշանակվում են ՀՀ ԶՈՒ Հոգևոր ծառայության առաջնորդի ներկայացմամբ, Վեհափառ Հայրապետի օրհնագրով և ՀՀ պաշտպանության նախարարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի հրամանով:

3.5. Հոգևոր ծառայության առաջնորդը և հոգևոր սպասավորներն ընդգրկվում են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի զորամասերի հաստիքային կառուցվածքում, վարձատրվում Մայր Աթոռի կողմից:

3.6. Հոգևոր ծառայության առաջնորդը Հոգևոր ծառայության ղեկավարումն իրականացնում է Վեհափառ Հայրապետի կողմից վավերացված և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից գործադրության ստորագրված ծրագրի համաձայն:

3.7. Բանակային կորպուսների և զորամասերի հոգևոր սպասավորներն իրենց գործունեությունն իրականացնում են ՀՀ պաշտպանության նախարարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի և ՀՀ ԶՈՒ Հոգևոր ծառայության առաջնորդի կողմից համատեղ հաստատված ծրագրերով: Ընթացիկ և կազմակերպական հարցերում առաջնորդվում են բանակային կորպուսների և զորամասերի հրամանատարների հրամաններով՝ համագործակցելով հրամանատարների՝ դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալների հետ:

3.8. Հոգևոր ծառայության առաջնորդը հաշվետու է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ՀՀ պաշտպանության նախարարին և նախարարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալին:

3.9. Բանակային կորպուսների և զորամասերի հոգևոր սպասավորները հաշվետու են Հոգևոր ծառայության առաջնորդին և բանակային կորպուսների ու զորամասերի հրամանատարներին:

3.10. Հոգևոր ծառայության առաջնորդը և հոգևոր սպասավորներն ազատվում են շարային ծառայությունից:

3.11. Հոգևոր ծառայության առաջնորդը և հոգևոր սպասավորներն իրենց ծառայությունը կատարում են եկեղեցական հանդերձանքով:

3.12. Հոգևոր սպասավորների կողմից իրենց պարտականությունների մեջ թերացումների, օրինազանցությունների, անթույլատրելի արարքների մասին բանակային կորպուսների և զորամասերի հրամանատարները տեղեկացնում են Հոգևոր ծառայության առաջնորդին և ՀՀ պաշտպանության նախարարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալին:

3.13. Հոգևոր սպասավորների խրախուսումները և տույժերը սահմանվում են՝ համաձայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոնադրության:

4.Հոգևոր ծառայության գույքը և միջոցները

4.1. Հոգևոր ծառայության գործունեությանն անհրաժեշտ փոխադրամիջոցները, եկեղեցական գույքը և անհրաժեշտ գրականությունն ապահովվում են Մայր Աթոռի կողմից և համարվում վերջինիս սեփականություն:

4.2. Հոգևոր հովիվների կացարանները, ոչ եկեղեցական գույքը, ինչպես նաև ավտոտրանսպորտային փոխադրամիջոցների անհրաժեշտ վառելանյութը (սահմանված լիմիտով) ապահովվում են պաշտպանության նախարարության կողմից և համարվում վերջինիս սեփականություն:

4.3. Հոգևոր ծառայության գույքը և միջոցները առաջանում են՝

-ՀՀ պաշտպանության նախարարության և Մայր Աթոռի հատկացումներից,

-եկեղեցական և պետական կառույցների ֆինանսական ներդրումներից,

-անհատների և բարեգործական կազմակերպությունների նվիրատվություններից:

5.Հոգևոր ծառայության լուծարումը

5.1. Հոգևոր ծառայությունը լուծարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնագրով և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

5.2. Հոգևոր ծառայության լուծարումից հետո եկեղեցական գույքը և միջոցները, ինչպես նաև գործունեության փաստաթղթերը հանձնվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ նրա կողմից լիազորված մարմնին, իսկ ոչ եկեղեցական գույքը և միջոցները հանձնվում են ՀՀ պաշտպանության նախարարությանը: